ԾԱՆՈՒՑՈՒՄ

Չորեքշաբթի, 27 մայիսի 2026թ., ժամը 15:00
Բաժնետերերի ֆիզիկական և առանց
ֆիզիկական ներկայության

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հարգելի բաժնետերեր,

Սիրով տեղեկացնում ենք, որ Ակբա բանկի խորհրդի որոշմամբ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը կգումարվի **2026 թվականի մայիսի 27-ին, չորեքշաբթի օրը, «Հատուկ միջոցառումների» սրահում, որը գտնվում է Գաֆէսճեան արվեստի կենտրոնում** (<<, ք. Երևան 0009, Թամանյան 10 հասցեում):

Այս տարին Բանկի համար առանձնահատուկ նշանակություն ունի, քանի որ նշվում է դրա հիմնադրման 30-ամյակը: Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը հիանալի հնարավորություն է այս կարևոր հանգրվանը կիսելու մեր բաժնետերերի հետ: Բաժնետերերը հանդիսանում են Բանկի առանցքային շահակիցները՝ ունենալով յուրահատուկ դեր Բանկի կառավարման համակարգում և կարևոր ներդրում Բանկի կայացման, կայունության և երկարաժամկետ զարգացման գործընթացում:

Ուրախ կլինենք այդ օրը կիսել Ձեզ հետ և, ժողովի պաշտոնական հատվածից հետո, շարունակել շփումը ավելի ջերմ և ոչ ֆորմալ մթնոլորտում:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ ժողովը կարող է անցկացվել սահմանափակ թվով բաժնետերերի ֆիզիկական ներկայությամբ: Այն բաժնետերերը, ովքեր չեն կարող մասնակցել անձամբ, հնարավորություն կունենան մասնակցելու ժողովին և իրացնել իրենց քվեարկության իրավունքը հեռավար՝ հատուկ իրական ժամանակում գործող հաղորդակցման միջոցներով:

Ակբա բանկն իր բաժնետերերին հրավիրում է հետևել իր ինտերնետային կայքում կորպորատիվ կառավարմանը նվիրված էջին, որտեղ տեղադրվելու են տարեկան ընդհանուր ժողովի բոլոր նյութերը: Նշված էջին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ: Բանկը ժողովին առնչվող նյութերն ուղարկելու է նաև բաժնետերերի էլեկտրոնային փոստի հասցեներին:

Հարգանքով՝
Սոնա Իշխանյան
Խորհրդի նախագահ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով

Չորեքշաբթի, 27 մայիսի 2026թ.,
ժամը 15:00

Բաժնետերերի ֆիզիկական
և առանց ֆիզիկական
ներկայության

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ֆիզիկապես ժողովին մասնակցել ցանկացող բաժնետերերը խնդրվում են մինչև 2026 թվականի մայիսի 25-ը ներառյալ ներկայացնել մասնակցության հայտ՝ առցանց՝ Բանկի կայքի միջոցով (www.invest.acba.am):

Խնդրում ենք նկատի ունենալ, որ տարածքի սահմանափակ հնարավորություններով պայմանավորված՝ Բանկը չի կարող ապահովել մեծ թվով անձանց ֆիզիկական մասնակցություն: Հետևաբար, ժողովին ֆիզիկապես մասնակցելու հնարավորություն կունենան միայն այն բաժնետերերը, որոնք կստանան մասնակցության հաստատում:

Արդար և թափանցիկ մոտեցումն ապահովելու նպատակով հաստատումները կտրամադրվեն առաջին դիմածի սկզբունքով՝ հաշվի առնելով հայտերի ներկայացման հերթականությունը, մինչև հասանելի տեղերի լրանալը:

Եթե Դուք չեք ներկայացրել ժողովին ֆիզիկապես մասնակցելու մասին հայտ կամ Ձեր հայտը չի բավարարվել, Դուք կարող եք ժողովին հետևել իրական ժամանակի ռեժիմում՝ **«Մայքրոսոֆթ Թիմս» (Microsoft Teams)** ծրագրով, որին միանալու հղումը լրացուցիչ կուղարկվի Ձեր էլեկտրոնային փոստի հասցեին:

Ժողովին ֆիզիկապես մասնակցելու մասին Ձեր հայտը բավարարվելու կամ մերժվելու դեպքում Դուք կստանաք համապատասխան ծանուցում:

Եթե ժողովին ֆիզիկապես մասնակցելու և/կամ Ձեր փոխարեն քվեարկելու է Ձեր լիազորված անձը, ապա անհրաժեշտ է ներկայացնել նաև օրենքով սահմանված կարգով տրամադրված լիազորագիր կամ ներկայացուցչությունը հիմնավորող այլ փաստաթուղթ:

Կարևոր է իմանալ.

Ժողովի մասնակիցների գրանցման պահն է 2026 թվականի մայիսի 27-ը, ժամը 15:00-ն: Քվորումի հաշվարկման և քվեարկության արդյունքների ամփոփման համար կիրառվում են հետևյալ կանոնները.

- Ժողովին ֆիզիկապես մասնակցող բաժնետերերը պետք է ներկայանան սրահի մուտքի մոտ ժամը 14:30 -ից և գրանցվեն՝ ներկայացնելով իրենց անձը հաստատող փաստաթուղթը (ինչպես նաև ներկայացուցչությունը հիմնավորող փաստաթուղթը՝ ներկայացուցիչ լինելու պարագայում).
- Ժողովին «Մայքրոսոֆթ Թիմս» (Microsoft Teams) ծրագրով միացած բաժնետերերը պետք է հարթակի «Զրուցարան» բաժնում անձնական նամակով մուտքագրեն իրենց անունը, ազգանունը, հայրանունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները.
- Մինչև նշված ժամկետի ավարտը քվեարկած բաժնետերերի ձայները հաշվի կառնվեն քվորումի հաշվարկման և քվեարկության արդյունքների ամփոփման համար.

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի գրավոր ներկայացնել մեկ կամ մի քանի գրավոր հարցեր, որոնց պատասխանները կհրապարակվեն ԱԿԲԱ բանկի կայքում, հետևյալ հղմամբ, ինչպես նաև կներկայացվեն Ընդհանուր ժողովի ընթացքում՝ ստորև նկարագրված պայմաններով.

Հարցեր ներկայացնելը

Բանկի այն բաժնետերերը, ովքեր ցանկանում են գրավոր եղանակով ուղղել իրենց հուզող հարցերը, կարող են սույն ծանուցման օրվանից մինչև 2026 թվականի մայիսի 27-ը ներառյալ ուղարկել դրանք էլեկտրոնային փոստի միջոցով՝ ir@acba.am էլեկտրոնային փոստի հասցեին կամ փոստային եղանակով Բանկի կենտրոնական գրասենյակ՝ ուղղված Բանկի Խորհրդի նախագահին:
Հեռավար միանալու դեպքում Դուք կարող եք նաև Ընդհանուր ժողովի ընթացքում գրավոր հարցեր ներկայացնել «Մայքրոսոֆթ Թիմս» ծրագրով:
Ընդհանուր ժողովին ֆիզիկապես մասնակցող բաժնետերերը հնարավորություն կունենան հարցեր ներկայացնել անմիջապես ժողովի ընթացքում:
Ուշադրություն.
Հաշվի կառնվեն միայն նշված ընթացակարգով ներկայացված հարցերը:

ՄՈԴԵՐԱՑԻԱՆ ԵՎ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼԸ

Ակբա բանկը կգործադրի բոլոր ջանքերը՝ պատասխանելու այս ընթացակարգով ստացված բոլոր հարցերին: Այնուամենայնիվ, գրավոր ներկայացված հարցերը, անհրաժեշտության դեպքում, կարող են մոդերացիայի ենթարկվել՝ Ընդհանուր ժողովի ընթացքում միջադեպերից խուսափելու համար: Բաժնետերերին խնդրում ենք պահպանել հետևյալ կանոնները.

- Կպատասխանվեն միայն Ընդհանուր ժողովի օրակարգին վերաբերող հարցերը:
- Մենք չենք պատասխանի անձնական, հաճախորդների հետ կապված կամ առևտրային բնույթ ունեցող հարցերին: Խնդրում ենք նման հարցերն ուղղել Բանկի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին՝ acba@acba.am:
- Վիրավորական կամ զրպարտիչ արտահայտություն պարունակող ցանկացած մեկնաբանություն կամ հարց չի պատասխանվի:
- Ցանկացած հարց, որը բավականաչափ հասկանալի կամ հստակ չէ, չի պատասխանվի: Բաժնետիրոջ պարտականությունն է ապահովել, որ հարցը ճիշտ ձևակերպված և պարզ լինի:
- Հարցերն ըստ թեմաների խմբավորելուց հետո Ընդհանուր ժողովի ընթացքում կտրվեն հնարավորինս շատ հարցերի պատասխաններ: Ժողովի ընթացքում տրված հարցերի պատասխանները կհրապարակվեն Բանկի կայքում: Այն հարցերի պատասխանները, որոնց չի հաջողվի պատասխանել ժողովի ընթացքում, նույնպես կհրապարակվեն Բանկի կայքում:

Ժողովի մեկնարկը.
Հիշեցնում ենք, որ Ընդհանուր ժողովը մեկնարկելու է 2026 թվականի մայիսի 27-ին՝ ժամը 15:00-ին: Ժողովին հեռավար միանալու հղումը լրացուցիչ կուղարկվի Ձեր էլեկտրոնային փոստի հասցեին:

ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Համաձայն Բանկի խորհրդի որոշման՝ 2026 թվականի մայիսի 27-ին Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն Բանկի բոլոր այն բաժնետերերը, անկախ տնօրինվող բաժնետոմսերի քանակից, ովքեր 2026 թվականի ապրիլի 21-ի ժամը 18:00-ի դրությամբ ընդգրկված կլինեն Բանկի բաժնետերերի ռեեստրում և կունենան բաժնետոմսերի անձնական հաշիվներ:

ԻՆՉՊԵ՞Ս ՕԳՏԱԳՈՐԾԵՄ ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ԻՄ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Բաժնետերերը կարող են օգտվել քվեարկելու հետևյալ տարբերակներից.

- **Քվեաթերթիկով՝** քվեաթերթիկը Բանկի հասցեին կամ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով: Ժողովին ֆիզիկապես ներկա բաժնետերերը կարող են քվեարկել ժողովի ընթացքում՝ լրացված քվեաթերթիկն Ընդհանուր ժողովի ընթացքում ժողովի քարտուղարին հանձնելու միջոցով, կամ

- **Էլեկտրոնային եղանակով՝** Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի CDAonline բջջային հավելվածի կամ https://online.cda.am կայքի միջոցով:

Նույն բաժնետիրոջ կողմից մեկից ավել անգամ քվեաթերթիկով քվեարկելու դեպքում հաշվի կառնվի առավել ուշ ներկայացված քվեաթերթիկը, իսկ նախորդ տարբերակները կհամարվեն անվավեր և հաշվի չեն առնվի ձայների հաշվարկի ժամանակ:

Նույն բաժնետիրոջ կողմից միաժամանակ և՛ քվեաթերթիկով, և՛ էլեկտրոնային եղանակով քվեարկելու դեպքում հաշվի կառնվի առավել ուշ ստացված քվեարկությունը, իսկ նախորդ քվեարկությունները կհամարվեն անվավեր և հաշվի չեն առնվի ձայների հաշվարկի ժամանակ:

Քվեարկության արդյունքները կամփոփվեն ԱԿԲԱ բանկի հաշվիչ հանձնաժողովի կողմից ժողովի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվիչ հանձնաժողովն ունի հետևյալ կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝

ՆԱՐԵԿ ԱՆՏՈՆՅԱՆ
(Ներդրողների հետ հարաբերությունների բաժնի պետ, Ակբա բանկ)

Հանձնաժողովի անդամներ՝

ՏԱԹԵՎԻԿ ԻԳԻԹՅԱՆ
(Կորպորատիվ քարտուղար, ԱԿԲԱ Բանկ)

ՍԻՐԱՆՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(Դիլինգի բեք օֆիսի բաժնի պետ, Ակբա բանկ)

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՔՎԵԱՐԿԵԼԸ

Դուք հնարավորություն ունեք տարեկան ընդհանուր ժողովին քվեարկել էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի CDAonline բջջային կամ վեբ (https://online.cda.am կայք) հավելվածների միջոցով:



ԿԱՐՈՐ Է ԻՄԱՆԱԼ

CDAonline բջջային հավելվածի կամ https://online.cda.am կայքի միջոցով էլեկտրոնային քվեարկությունը հասանելի կլինի 2026 թվականի մայիսի 11-ից մինչև 2026 թվականի մայիսի 27-ը ժամը 24:00-ն ներառյալ: Մինչև նշված ժամկետի ավարտը Դուք իրավունք ունեք փոփոխել Ձեր կատարած քվեարկությունը, որն էլ կհամարվի որպես վերջնական:

Էլեկտրոնային քվեարկությունն առաջարկում է նույն տարբերակներն ինչ քվեաթերթիկը:

Քվեարկություն կատարելու համար անհրաժեշտ է մուտք գործել վեբ հավելված հետևյալ հղմամբ https://online.cda.am/auth/login կամ Ձեր բջջային հավելված և մուտքագրել «Օգտանունը» և «Գաղտնաբառը» (եթե Դուք դեռևս գրանցված օգտատեր չեք, անհրաժեշտ է նախ և առաջ գրանցվել՝ հետևելով օգտատիրոջ ձեռնարկին https://cda.am/am/document?id=1487):

Քվեարկություն կատարելու համար անհրաժեշտ է «էլեկտրոնային քվեարկություն» բաժնում մուտք գործել **«Ակտիվ»** ենթաբաժինը:



«**Ակտիվ»** ենթաբաժին մուտք գործելուց հետո անհրաժեշտ է քվեարկության ներկայացված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ կատարել առանձին քվեարկություն՝ սեղմելով քվեարկել կոճակը:

Քննարկման ներկայացված բոլոր հարցերի վերաբերյալ քվեարկելուց հետո անհրաժեշտ է սեղմել «Կատարել քվեարկություն» կոճակը, որից հետո միայն Ձեր քվեարկությունը կհամարվի կատարված:



Եթե ունեք հարցեր կամ խնդիրներ CDAonline մուտք գործելու համար

Կարող եք զանգահարել ԱԿԲԱ բանկ յուրաքանչյուր աշխատանքային օր **(երկուշաբթիից ուրբաթ) ժամը 09:00-ից 17:30-ն՝ 010 31 88 88** (ներքին՝ **8125** կամ **8369**) հեռախոսահամարով կամ կապ հաստատել **dealing.backoffice@acba.am** էլեկտրոնային փոստի միջոցով:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ՄԻՋՈՑՈՎ ՔՎԵԱՐԿԵԼԸ

Դուք նաև հնարավորություն ունեք տարեկան ընդհանուր ժողովին քվեարկել քվեաթերթիկի միջոցով: Այդ նպատակով Ձեր կողմից լրացված քվեաթերթիկը պետք է ուղարկվի Ակբա բանկի **ir@acba.am** էլեկտրոնային հասցեին կամ ներկայացվի թղթային եղանակով՝ ՀՀ, Երևան, Արամի 82-84 հասցեով:

Քվեաթերթիկի օրինակը ներկայացված է սույն ծանուցման **10-րդ** էջում: Այն առանձին ուղարկվելու է Ձեր էլեկտրոնային փոստի հասցեին և տեղադրված կլինի մեր կայքում: Քվեարկության դրված հարցերը և առաջարկվող որոշումների նախագծերը ներկայացված են սույն ծանուցման **կից**:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ



Կարևոր. ընտրելուց առաջ խնդրում ենք ծանոթանալ հրահանգներին / Important: Before selecting, please refer to instructions
Անկախ նրանից թե որ տարբերակն եք ընտրում, նշեք "X" կամ "V", լրացրեք ամսաթիվը և ստորագրեք ներքևում / Whichever option is used, check box(es) like this "X" or "V", date, and sign at the bottom of the form

acba
ՎԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
"ACBA BANK" OJSC
ir@acba.am

Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր ժողով
27 մայիսի 2026թ.

Annual General Meeting of Shareholders
27th of May, 2026

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԼՑՆԵԼ ՔՎԵԱԹԵՐԹԻԿԸ ՀՐԱՆՑԵԼ, ՎԵՐՍՊՈՒՀԱՎՈՐԵԼ ՄԻԱՅՆ ԲԱՆԿԻ ՀԱՄԱՐ
PLEASE DON'T FILL IN THIS PART, FOR BANK'S USE ONLY

Տարեկան ընդհանուր ժողովի / Shareholders meeting

Տարեկան ընդհանուր ժողովի / Shareholders meeting

Տանցամանմանց ներկայացվածորոշման նախագծի վերաբերյալ քվեարկումներ / Votes on the draft decision submitted in the notice as follows:

Հարց/Item 3	Որոշում / Resolution N1	Կողմ/For ☐	Դեմ/Against ☐	Չեզոպան/Abstain ☐
Հարց/Item 4	Որոշում / Resolution N2	Կողմ/For ☐	Դեմ/Against ☐	Չեզոպան/Abstain ☐
Հարց/Item 5	Որոշում / Resolution N3	Կողմ/For ☐	Դեմ/Against ☐	Չեզոպան/Abstain ☐
Հարց/Item 6	Որոշում / Resolution N4	Կողմ/For ☐	Դեմ/Against ☐	Չեզոպան/Abstain ☐
Հարց/Item 7	Որոշում / Resolution N5.1	Կողմ/For ☐	Դեմ/Against ☐	Չեզոպան/Abstain ☐
	Որոշում / Resolution N5.2	Կողմ/For ☐	Դեմ/Against ☐	Չեզոպան/Abstain ☐
	Որոշում / Resolution N5.3	Կողմ/For ☐	Դեմ/Against ☐	Չեզոպան/Abstain ☐
Հարց/Item 8	Որոշում / Resolution N6	Կողմ/For ☐	Դեմ/Against ☐	Չեզոպան/Abstain ☐
Հարց/Item 9	Որոշում / Resolution N7	Կողմ/For ☐	Դեմ/Against ☐	Չեզոպան/Abstain ☐
Հարց/Item 10	Որոշում / Resolution N8	Կողմ/For ☐	Դեմ/Against ☐	Չեզոպան/Abstain ☐

Հարցերի համար բոլոր քվեաթերթիկները էլեկտրոնային փոստի միջոցով ստանալու դեպքում, դրանք պետք է ներկայացվեն մինչև 2026 թվականի մայիսի 27-ի ժամը 24:00-ն:
In order to be considered, this completed form must be sent or returned to "ACBA BANK" OJSC at the latest at 24:00 of 27th of May 2026.

- Ընտրանքների առաջարկներ չեն ընդունվում:
- Ընտրանքների ամսաթիվ չունեցող, կամ ստորագրված կամ ստորագրված ոչ իրավասու անձի կողմից
- եթե քվեարկության դրված մեկ կամ մի քանի որոշումներ հարցերի քվեարկման ընթացքում, կամ դրանց կապակցությամբ ստորագրված հարցերի դեպքում մեկ կամ մի քանի հարցերի դեմ լրացված է կամ չի լրացված պահանջվող ձևաչափով, ապա դրանց քվեարկությունը հաշվի չի առնվի ձայների հաշվարկման ընթացքում:
- Only one box shall be filled in for each resolution.
- The voting ballot shall not be filled in with deletions.
- The voting ballot will be considered as invalid if it is not filled in or not signed or signed by a non-authorized person.
- If the ballot paper is not filled in or filled in incompletely in relation to any of the draft resolutions, or if it is filled in against the requirements of this instruction, the vote on the given resolution will not be considered during the counting of votes.

Անուն ազգանուն / անվանում Surname, first name / Entity legal name	
ՀԾՀ / ՀՎՀՀ Public service number / Tax IDN	
Ամսաթիվ Date	
Ստորագրություն * Signature *	

* Անհրաժեշտ դեպքում՝ Ձեր էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկվելու դեպքում ստորագրությունը պարտադիր չէ/
Incase of sending from your email address registered in ACBA Bank, putting signature is not obligatory

Քայլ 1: Ներբեռնեք քվեաթերթիկը և լրացրեք այն:
Քայլ 2: Լրացրեք Ձեր տվյալները:
Քայլ 3: Նշեք ամսաթիվը և ստորագրեք:
Քայլ 4: Ուղարկեք լրացված քվեաթերթիկը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ:

Յուրաքանչյուր հարցի առնչությամբ պետք է լրացվի առաջարկվող վանդակներից միայն մեկը՝ կիրառելով "X" կամ "V" նշանները:
Քվեաթերթիկը չի կարող լրացվել ջնջումներով:
Քվեաթերթիկը կհամարվի անվավեր, եթե այն լրացված չլինի կամ ստորագրված չլինի կամ ստորագրված լինի ոչ իրավասու անձի կողմից
Եթե քվեարկության դրված հարցերից որևէ մեկի հետ կապված քվեաթերթիկը չլրացնելու կամ թերի լրացնելու կամ սույն հրահանգի պահանջների խախտմամբ լրացնելու դեպքում տվյալ հարցի քվեարկությունը հաշվի չի առնվի ձայների հաշվառման ժամանակ:
Ակբա բանկում գրանցված Ձեր էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկվելու դեպքում Ձեր ստորագրությունը պարտադիր չէ:

Խնդրում ենք Ձեր կողմից լրացված քվեաթերթիկը հանձնել Ակբա բանկ կամ փոստ մինչև **2026 թվականի մայիսի 27-ի ժամը 24:00-ն**: Դրանից հետո ստացված բոլոր քվեաթերթիկները հաշվի չեն առնվելու:

Քվեաթերթիկով քվեարկելու հետ կապված հարցեր կամ խնդիրներ ունենալու դեպքում կարող եք զանգահարել Ակբա բանկ յուրաքանչյուր աշխատանքային օր **(երկուշաբթիից ուրբաթ) ժամը 09:00-ից 17:30-ն՝ 010 31-88-88 (ներքին՝ 8329)** հեռախոսահամարով կամ կապ հաստատել **lawyer@acba.am** էլեկտրոնային փոստի միջոցով:

ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԸ

Հարց 1.	Կորպորատիվ կառավարման 2025 թվականի զեկույցի ներկայացում (Խորհրդի տարեկան հաշվետվություն)
Հարց 2.	Գլխավոր գործադիր տնօրենի զեկույցի ներկայացում բանկի 2025 թվականի տարեկան ցուցանիշների և 2026 թվականի նպատակների մասին
Հարց 3.	Արտաքին աուդիտի եզրակացությամբ բանկի 2025 թվականի համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատելու մասին
Հարց 4.	Բանկի 2025 թվականի տարեկան շահույթը բաշխում
Հարց 5.	Բանկի արտաքին աուդիտորի ընտրություն
Հարց 6.	Բանկի կանոնադրության նոր խմբագրության հաստատում
Հարց 7.	Անժամկետ պարտատոմսերի թողարկման հաստատում
Հարց 8.	Անժամկետ պարտատոմսերի ցուցակման հաստատում դրանց թողարկումից հետո
Հարց 9.	Խորհրդի անդամների վարձատրության և փոխհատուցման պայմանների հաստատում
Հարց 10.	Խորհրդի նախկին նախագահ Ռաֆայել Սարգսյանի՝ որպես խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման կապակցությամբ փոխհատուցման տրամադրում

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ

01

ՀԱՐՑ 1-ԻՆ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ (ԽՈՐՀՐԴԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ)

1-ին հարցի շրջանակներում ներկայացվում են Կորպորատիվ կառավարման զեկույցի առանցքային կետերը, ներառյալ Խորհրդի և հանձնաժողովների տարեկան զեկույցները՝ 2025 թվականին կատարված աշխատանքների և 2026 թվականի առաջնահերթությունների վերաբերյալ: Զեկույցի ներկայացման պահանջը նախատեսված է ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքով:

Հարցը քվեարկման ենթակա չէ: Առաջարկվում է ընդունել ի գիտություն:

02

ՀԱՐՑ 2-ՐԴ

ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԶԵԿՈՒՅՑԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԲԱՆԿԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարցը քվեարկման ենթակա չէ: Առաջարկվում է գլխավոր գործադիր տնօրենի զեկույցն ընդունել ի գիտություն:

03

ՀԱՐՑ 3-ՐԴ

ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԿԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3-րդ հարցի շրջանակներում բաժնետերերի հաստատմանն է ներկայացվելու Բանկի արտաքին աուդիտորի («ՓՐԱՅՍՈՒՈԹԵՐՀԱՈՒՍԿՈՒՊԵՐՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ) կողմից աուդիտ անցած 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի համախմբված ֆինանսական հաշվետվությունները:

Տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատումը ներկայացվում է Ընդհանուր ժողովին:
Հարցը ենթակա է քվեարկման

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 1

Հաստատել արտաքին աուդիտի եզրակացությամբ Բանկի 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող ֆինանսական տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի, համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը:

04 ՀԱՐՑ 4-ՐԴ

ԲԱՆԿԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒՅԹԸ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4-րդ հարցի շրջանակներում բաժնետերերի հաստատմանն է ներկայացվում Բանկի 2025 թվականի գործունեության արդյունքում ձևավորված շահույթի բաշխման հարցը:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ շահույթը կազմել է 35,856,026,000 (երեսունհինգ միլիարդ ութ հարյուր հիսունվեց միլիոն քսանվեց հազար) ՀՀ դրամ: 2026 թվականի ապրիլի 27-ին կայացած Բանկի խորհրդի նիստով որոշվել է առաջարկել բաժնետերերին վճարել ընդհանուր 7,481,250,000 (յոթ միլիարդ չորս հարյուր ութսունմեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ որպես տարեկան շահութաբաժին, այն է՝ յուրաքանչյուր 1 բաժնետոմսի դիմաց՝ 1,250 (հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

Հաստատման դեպքում շահութաբաժինները կվճարվեն մինչև 2026 թվականի հունիսի 20-ը:

Հարցն ենթակա է քվեարկման:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 2

Բանկի 2025 թվականի գործունեության արդյունքում ձևավորված զուտ շահույթից Բանկի բաժնետերերին վճարել ընդհանուր ընդհանուր 7,481,250,000 (յոթ միլիարդ չորս հարյուր ութսունմեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես տարեկան շահութաբաժին, այն է՝ յուրաքանչյուր 1 բաժնետոմսի դիմաց՝ 1,250 (հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

Տարեկան շահութաբաժինների վճարումները կատարել առավելագույնը մինչև 20/06/2026թ.-ը ներառյալ, դրամական միանվագ փոխանցմամբ, «Ակբա բանկ» ԲԲԸ բաժնետերերի տարե¬կան ընդհանուր ժողո¬վին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա՝ 2026 թվականի ապրիլի 21-ի, ժամը 18:00-ի դրությամբ Բանկի մասնակիցների ռեեստրում ընդգրկված բաժնետերերին՝ կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությանը համամասնորեն:

05

ՀԱՐՑ 5-ՐԴ

ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Բանկի խորհրդի 27/04/2026թ. նիստով նախնական հաստատվել է Բանկի 2026 և 2027 թվականներին ավարտվող ֆինանսական տարվա տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնելու նպատակով որպես արտաքին աուդիտ իրականացնող անձի՝ «Փրայսուոթերհաուսկուփերս Արմենիա» ՍՊԸ-ի թեկնածությունը:

Ընդհանուր ժողովը պետք է որոշում կայացնի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատման վերաբերյալ:

Հարցն ենթակա է քվեարկման:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 3

Բանկի 2026 և 2027 թվականներին ավարտվող ֆինանսական տարիների տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնելու նպատակով որպես արտաքին աուդիտ իրականացնող անձ հաստատել «ՓՐԱՅՍՈՒՈԹԵՐՀԱՈՒՍԿՈՒՊԵՐՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ին:

06

ՀԱՐՑ 6-ՐԴ

ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

6-րդ հարցի շրջանակներում բաժնետերերի հաստատմանն է ներկայացվում Բանկի նոր խմբագրությամբ կանոնադրությունը: Առաջարկվող փոփոխությունները վերաբերում են Խորհրդի և Ընդհանուր ժողովի իրավասություններին և նպատակ ունեն ապահովել Ակբա բանկի խմբի գործառնական արդյունավետությունն ու կառավարման մարմինների իրավասությունների հստակությունը:

Հարցն ենթակա է քվեարկման:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 4

Հաստատել Բանկի նոր խմբագրությամբ կանոնադրությունը համաձայն հավելված 4.1-ի:

07

ՀԱՐՑ 7-ՐԴ

ԱՆԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Բանկի կանոնադրության համաձայն՝ բաժնետերերի հաստատմանն է ներկայացվում անժամկետ պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման հիմնական պայմանները՝ համաձայն Հավելված 5.1-ի: Բաժնետերերի հաստատմանն է ներկայացվում հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերի նկատմամբ Բանկի բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը և դրանց տեղաբաշխումը բաց բաժանորդագրության ձևով:

Հարցն ենթակա է քվեարկման:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 5

5.1 Հաստատել անժամկետ պարտատոմսերի թողարկումը, հրապարակային տեղաբաշխումը, շրջանառությունը և մարումը՝ համաձայն Հավելված 5.1-ում նկարագրված պայմանների:

5.2 Հաստատել հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող անժամկետ պարտատոմսերի նկատմամբ Բանկի բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշումը:

5.3 Հաստատել հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող անժամկետ պարտատոմսերի տեղաբաշխումը բաց բաժանորդագրության ձևով:

08

ՀԱՐՑ 8-ՐԴ

ԱՆԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՑՈՒՑԱԿՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԴՐԱՆՑ ԹՈՂԱՐԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Բանկի կանոնադրության համաձայն բաժնետերերի հաստատմանն է ներկայացվում անժամկետ պարտատոմսերը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում ցուցակման ներկայացնելու որոշումը, դրանց թողարկումից հետո:

Հարցն ենթակա է քվեարկման:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 6

Հաստատել անժամկետ պարտատոմսերը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում ցուցակման ներկայացնելու մասին որոշումը դրանց թողարկումից հետո:

09

ՀԱՐՑ 9-ՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ և ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

9-րդ հարցի շրջանակներում բաժնետերերի հաստատմանն է ներկայացվում Խորհրդի անդամների վարձատրության և փոխհատուցման պայմանները՝ համաձայն Հավելված 7.1-ի:

Հարցն ենթակա է քվեարկման:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 7

Հաստատել Խորհրդի անդամների վարձատրության և փոխհատուցման պայմանները՝ համաձայն Հավելված 7.1-ի՝ ուժը կորցրած ճանաչելով Խորհրդի անդամների վարձատրության և փոխհատուցման՝ մինչ սույն որոշման ընդունումը գործող բոլոր այլ պայմանները:

10

ՀԱՐՑ 10-ՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ՍԱՐԳՍՅԱՆԻ՝ ՈՐՊԵՍ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

10-րդ հարցի շրջանակներում բաժնետերերի հաստատմանն է ներկայացվում խորհրդի նախկին նախագահ Ռաֆայել Սարգսյանի՝ որպես խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման կապակցությամբ փոխհատուցման տրամադրման հարցը:

Հարցն ենթակա է քվեարկման:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՈՐՈՇՈՒՄ N 8

Հաստատել խորհրդի նախկին նախագահ Ռաֆայել Սարգսյանի՝ որպես խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման կապակցությամբ փոխհատուցման տրամադրումը՝ սույն որոշման Հավելված 8.1-ով սահմանված չափով:

Որոշումներին կից հավելվածները հրապարակվել են Բանկի ինտերնետային կայքում, որոնց կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով.

https://www.acba.am/hy/about-bank/about/Coorporative-Management

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի համախմբված ֆինանսական հաշվետվությունները հասանելի են հետևյալ հղմամբ.

https://www.acba.am/hy/reports

Որոշումների և կից հավելվածների հայերեն և անգլերեն տարբերակների միջև հակասությունների դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
82-84, Արամի փողոց 0002, Երևան, ՀՀ
www.acba.am | 010 31 88 88
ir@acba.am

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից